

երեւան պիտի ելլեն և մասամբ պատմագիրներու մէջ տեղեկութեանց յայտարերումով, բայց մասնաւոր պեղումներու նետեանքով. փրֆ. Մար արդէն իսկ ք լոյս հանեց Անիի խորերէն Բագրատունեաց շրջանի Հայոց առանին կեանքի շատ մը առարկաներ. մաղթենք որ այդպիսի պեղումներ, խուզարկութիւններ, ուսումնասիրութիւններ քաջալերուին, շարունակուին, ընդարձակուին, եւ որ մը Հայ ցեղն ալ կարենայ տիեզերական ցուցահանդէսներուն մէջ լիակատարօրէն ի ցոյց դնել իր ուրոյն արուեստը ամէն ձեւով :

Առ այժմ, մենք ուրախութեամբ կ'արձանագրենք յաղթական յաղողութիւնը Հայու մը եւրոպայի մէջ՝ իբր նրբաճաշակ ըմբռնող, հաւատարմութեամբ արեւելեան արուեստին :



ՀՍԹ ԷՔԵՐ

Տաղ Եկեղեցւոյ

ԵՒ

Ի ՏԱՃԱՐՆ ՍՈՒՐԲ

(Վերագրւած Գ. Նաբեկեացւոյն)



օրք ի վերուստ իշեալ առ Սողոմոն արքայն,  
 Եինէին զտաճարն, տաշէին ըզփայտն,  
 Գերէին ըզքարն առ ձեռնադրեալ փայտին .  
 Գորգեցաւ երկիք, հուշակեցան լերինք,  
 Քատառեցաւ արձանքն, ի ծայնէ յունադորդ ֆայթմանցն :

Երկոտասան նիւթից, երեքտասան կողմանց,  
 digitised by

Չորեքտասան մասանցն; կապուտակ նիւթիցն,  
 Ջնոյն քարոզէին, ըզվարսն հատանէին,  
 Ի ներքնական սեմոցն՝ զարծաթապատ բեւեռքն  
 Ի լրծակէ լրծակ :

Մըտանէր Գիրիմն արքայն ի տունըն տէրու-  
 նական,  
 Տեսանէր Գիրիմն արքայն ըզգարդ գամենայն  
 գունիցն.  
 Ըզշողն եւ ըզշուշան, ըզյորդանն եւ ըզացա-  
 գոյն սպիտակն,  
 Անդնդահոս վըտակ, հաւ Թիթըլունս արկեալ,  
 Ջայն մարգարտով կազմէր, շողանման կապէր  
 Ի կողակէ կողակ :

Քանի՞ Թիւ կողեկացն, քանի՞ Թիւ խորանացն,  
 Քանի՞ Թիւ կամարացն, քանի՞ Թիւ կանթողացն,  
 Քանի՞ Թիւ վարագուրացն եւ քանի Թիւ զան-  
 գակացն .  
 Հազար Թիւ կողակացն, հազար Թիւ խորա-  
 նացն,  
 Հազար Թիւ կամարացն, հազար Թիւ կան-  
 թողացն,  
 Հազար Թիւ վարագուրացն եւ բիւր մի զան-  
 գակացն :

Տաճարքն այն ո՛ւմ նըման է, աճառքն այն  
 ո՛ւմ նըման է .  
 Մարդակքն այն ո՛ւմ նըման է, գերանքն այն  
 ո՛ւմ նըման է .  
 Ժոյակքն այն ո՛ւմ նըման է, պիւնքն այն  
 ո՛ւմ նըման է .  
 Խարիսխքն այն ո՛ւմ նըման է, եւ տաճարն  
 այլ ո՛ւմ վույլ է :

Աճառքն մարտիրոսացն, մարդակքն մարգա-  
 ընիցն,  
 Գերանքն քերովքէիցն, խոյակքն առաքելոցն,  
 Սիւնքն սերովքէիցն, խարիսխն սքրոյ Կուսին:  
 Տաճարն վայլ է Գրկչին :

Քարշէին ըզլարն, հնչէին զանգակքն,  
 Գորդայր տաճարն, հոխայր ճախարակքն,  
 Տնծայր Սողոմոն արքայն,  
 Եւ երգս ի բարձունս երգէին նուագելով,  
 Եւ գոչէին ասելով Ալելուիա :

